

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

## ԵՒ

### ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստան եւ Սփիւքը հասկացութիւնները ըստ էութեան եւ բնոյթի ունին դարերու պատմութիւն:

Հայութեան բաղկացուցիչ այս երկու միաւորները ժամանակի ընթացքին ունեցած են ամենատարբեր կարգավիճակներ: Այսօր անոնք թեւակոխած են նոր հանգրուան:

Անկասկած, այս երկու միաւորներուն միջեւ առկայ եւ յառաջանալիք բազմապահանջ, բազմամիտում եւ բազմավիճակ փոխյարաբերութիւնը բարդ բնոյթ ունի:

Սփիւքը իր էութեամբ, իր կազմակերպական եւ մարդկային բաղադրատարրերով, իր ինքնընկալումի բազմազանութեամբ եւ աշխարհագրական վերադասաւորումներով յարաշարժ եւ յարափոփոխ վիճակ մը կը ներկայացնէ: Իսկ Հայաստանի Հանրապետութիւնը, հակառակ իր շուրջ քսանամեայ երթին, դժուար թէ տակաւին նկատուի լիարժեքօրէն կայացած պետութիւն՝ իր բոլոր բաղադրիչներով: Ուստի՝ Հայաստանի պետական քաղաքականութիւնը Սփիւքի հանդէպ, անցնող տասնամեակներուն, իւրաքանչիւր վարչակարգի եւ իշխանական հերթափոխի հետ՝ ներկայացաւ տարբեր երեսակներով:

Այսօր, Սփիւքի նախարարութեան ծնունդով միանգամընդմիշտ կ'ամրագրուի այն բացարձակ ճշմարտութիւնը, որ մէկ կողմէն Սփիւքը հայ մնալու համար պէտք ունի Հայաստանին, իսկ միւս կողմէն Հայաստանը պէտք ունի հա՛յ Սփիւքին, որովհետեւ Հայաստանի Հանրապետութիւն եւ Սփիւք իրարու համար անօտարելի, անփոխարինելի, անհակադրելի գոյութիւններ են՝ նոյնիսկ երբ կը ներկայանան ինքնուրոյն դիմագիծերով:

Հայ Սփիւքի հայեցիութեան պահպանումով եւ Սփիւքի հանդէպ Հայաստանի Հանրապետութեան առողջ քաղաքականութեամբ միայն՝ այդ երկու միաւորները կրնան միասնաբար սերտաճիլ եւ զիրար լրացնելով երաշխաւորել իրենց թէ՛ համարկուած եւ թէ՛ ինքնուրոյն գոյատեւումը գալիք դարերու երկայնքին:

Այս ընկալումին նպաստող գլխաւոր ազդակներէն մին է հայագիտութիւնը, որ կը հանդիսանայ Հայաստանն ու Սփիւռքը իրարու միացնող պորտակապը, մինչ Սփիւռքի Նախարարութիւնը կը հանդիսանայ երկար սպասումէ ետք մարմին առած այն գեղեցիկ խոստումը, որ կրնայ բեղուն դարձնել այս զօղումը:

Լայնածիր այս պարունակին մէջ, ակադեմական իր խորքին առընթեր, Սփիւռքի մէջ հայագիտութիւնը ո՛չ միայն գիտութիւն է, այլ նաեւ ինքնագիտակցութիւն, որ կը վերածուի առողջ հայապահպանման կոտ գործօնի. նոյն ելակետով՝ հայագիտութիւնը Հայաստանի Հանրապետութեան մէջ պէտք է դառնայ նաեւ Սփիւռքի առողջ ճանաչման եւ ընկալման կարեւոր լծակ:

Աւելին, Սփիւռքի Նախարարութիւնը պէտք է աջակցի, մղում տայ, եւ նախաձեռնէ հայագիտական այնպիսի ծրագիրներու, որոնք չեն կրնար իրագործուիլ առանձին հայագիտական կեդրոններու կամ անհատ հայագետներու կարողականութեան պարունակին մէջ: Նման ծրագրերու իրականացումը անյետաձգելի անհրաժեշտութիւն է պետական եւ համահայկական ռազմավարութեան տեսակետէ: Օրինակ, արդի գաղթօճախներու համակողմանի, գիտական ուսումնասիրութիւնը կարելի չէ իրականացնել առանց Սփիւռք-Հայաստան գիտական միտքի համագործակցութեան:

Անհրաժեշտ է որ Նախարարութեան վարչական կառոյցէն ներս գործէ Քարտուղարութիւն մը, որ համադրէ եւ համակարգէ, ստանայ եւ վերասփռէ Հայաստանի եւ արտասահմանի մէջ զարգացող հայագիտական միտքն ու բերքը, դառնալով այն հանգուցակետը, որ փոխհաղորդակցութեան մէջ պիտի դնէ համաշխարհային հայագիտական նուաճումներն ու գործունէութիւնը:

Հայագիտութեան առողջ ինքնագիտակցութիւն ըլլալու այս ընթրնումը պէտք է մղէ Սփիւռքի Նախարարութիւնը դառնալու այն ազատ ասպարէզը, ուր իրարու գան Հայաստանի եւ Սփիւռքի հայագետները, առողջ բանավեճով եւ նախանձախնդիր քննարկումներով համադրելու եւ համատեղելու հայագիտութիւնը յուզող ամենատարբեր խնդիրները, շրջանցելով այն ենթակայական մօտեցումները եւ գիտականօրէն չհիմնաւորուած տեսակետերը, որոնք կը խոչընդոտեն հայագիտութեան լիարժէք զարգացումը:



Հետեւաբար, կ'ակնկալուի որ Սփիւքի Նախարարութիւնը հայագիտութեան հաղորդէ հաստատութեանական թափ ու մղում եւ ազատ արմատաւորում, զերծ ամէն տեսակի քաղաքական, տնտեսական եւ այլ ազդեցութենէ, իսկ Սփիւքը հայագիտութեան տայ տարածականութիւն եւ համաշխարհային գիտական միտքի յառաջընթացին հետ սերտաճում, առանց արեւելումի թելադրանքներու:

Այս հասկացութեամբ, կը սպասենք որ հայագիտութիւնը միշտ իր կարելոր տեղն ունենայ Սփիւքի Նախարարութեան օրակարգերու շարքին:

#### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կոստեան

#### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Արտա Էքմէքճի (ի պաշտօնէ) - Արշալոյս Թովալեան - Արմէն Իրնէշլեան - Անդրանիկ Տազեսեան (պատասխանատու քարտուղար)

#### ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐՈՒ ՍԱՐՄԻՆ

Սիլվիա Աճէմեան - Ժիրայր Դանիէլեան - Երուանդ Երկանեան - Հրանոյշ Խառատեան - Մուրատ Հասրաթեան - Հրաչ Զիլինկիրեան - Սկրտիչ Յ. Պուլտութեան - Սեդա Տատոյեան - Սուզըն Փեթի - Պերճ Ֆազլեան

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ՝

Արծուի Բախչիմեան

## ARMENIAN STUDIES AND THE MINISTRY OF THE DIASPORA

Armenia and the Diaspora are two concepts which have a history of centuries.

Throughout the centuries these two components of the Armenian nation have had very different statuses. Today they encounter a new stage.

Certainly, the current and forthcoming interrelation between these two entities is complicated, as there are multiple trends, demands and circumstances.

The Diaspora, in essence as well as in its organizational and human components, its pluralistic self-perception and its geographic relocations represents a constantly mobile and changing reality. On the other hand, the Republic of Armenia, notwithstanding its twenty-year existence, has not yet completed the stage of state formation. Indeed, the state policy of the republic towards the Diaspora has had diverse tracks with every rotation of the state authorities.

Today, the birth of the Ministry of the Diaspora once and for all consolidates the absolute truth that in order to maintain its Armenian identity the Diaspora needs Armenia. Likewise the Republic of Armenia needs the Armenian Diaspora, as these two are inalienable, irreplaceable and complementary entities for each other, even when they act within their own frameworks.

Only the preservation of the Armenian identity of the Diaspora, and the healthy policy of the Republic of Armenia vis-à-vis the Diaspora enable these two entities to grow together. By complementing each other, they guarantee their integrated as well as separate survival in the forthcoming centuries.



Armenian Studies is a major factor in enhancing this understanding. It represents the umbilical cord that ties Armenia and the Diaspora to each other, and the Ministry of the Diaspora, which has become reality after a long wait, may make this tie fruitful.

In this broad context, with its academic depth, Armenian studies in the Diaspora has become a science and a tool for self-knowledge and healthy identity preservation. Concurrently, Armenian studies in Armenia should become an important means for the healthy recognition of the Diaspora.

Moreover, the Ministry of the Diaspora should support and initiate Armenological projects which cannot be realized by individual scholars or departments of Armenian studies. The realization of such projects cannot be delayed due to their pan-Armenian strategic and state importance. For instance the extensive and scientific study of contemporary Armenian Diaspora communities cannot be realized without cooperation in the scientific efforts of scholars in both the Diaspora and the Republic of Armenia.

It is essential that within the administrative structure of the Ministry a secretariat should function to coordinate and combine, receive and disseminate the Armenological products of both Armenia and the Diaspora. This secretariat would thus become the hub for disseminating world Armenological achievements and activities.

The very fact that Armenian studies has become the means for healthy self-knowledge should push the Ministry of the Diaspora to become a free venue where the Diaspora and Armenia scholars meet in healthy scrutiny and objective discussions. In this way they could combine and coordinate the diverse issues that concern Armenian studies, and overcome the subjective approaches and scientifically unproven views which impede the full-fledged development of Armenian studies.

Thus, it is expected that the Ministry of the Diaspora will provide institutional thrust and free and solid roots with no political, economic or other attachments. Likewise, the Diaspora should grant Armenian studies unbiased breadth and growth entwined with world scientific developments.

With this in mind we expect that Armenian studies will have an important place on the agenda of the Ministry of the Diaspora.

#### EDITOR IN-CHIEF

The Very Rev. Father Antranik Granian

#### EDITORIAL BOARD

Antranik Dakessian (executive secretary) – Arda Ekmekji (ex-officio) – Arshalouyse Topalian – Armen Urneshlian

#### CONSULTATIVE BODY

Sylvia Agemian – Megerditch H. Bouldoukian – Seta B. Dadoyan – Berj Fazlian – Murad Hasratian – Hranush Kharatian – Susan Pattie – Jirayr Tanielian – Hratch Tchilingirian – Yervand Yerkanian

#### REPRESENTATIVE IN ARMENIA

Artsvi Bakhchinyan